

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

(Շար. տես թագմ. 1953, թ. 11-12, էջ 244)

1890-ին Եղիայի հոգեկան տրամու-
թիւններուն վրայ կ'աւելնան մտային
սարսուռները, որոնց ծնունդը կը զգացը-
նէին արդէն նախընթաց երգերը՝ անբնա-
կանին, ահաւորին, սարսափելիին զգա-
ցողութիւնները տալով: Բայց 1890, 31
Յուլիսին, մօրը մահը աւելի եւս ուժգին
կը ցնցէ Եղիան, որ արդէն ամէն մեռնո-
ղին հետ կը մեռնէր: Իրեւել մահուան յա-
ւերժական պատկեր ուղեց պահել այն
սենեակը, ուր նէ անչնչացաւ, այսինքն
բոլոր այն մեռելական սարքովը, որ մահ-
ուան հոտը կը բուրէր միշտ հոն: Եղիա
այդ հոտովը երկար ատեն պիտի հեշտա-
նար յիմարօրէն, եթէ բարեբար ձեռք մը
չգար կարգ կանոն դնելու այդ սենեակին
մէջ:

Այդ թուականէն կը սկսի սաստկանալ
իր մէջ խօլական տենչանքը լուիկ առանձ-
նութիւններու, տենչանքը խաւարին, ան-
հետացումի եւ անէացումի: Այդ շրջանին
ա'լ աւելի կը շեշտուին հալածանքի խե-
լագարութեան նշանները: Մին միւսին ե-
տեւէն կը փոխէ իր բնակարանները, բայց

իր հոգւոյն ամբոխումը կը շարունակուի
մնալ միշտ նոյնը: Ինքն իսկ այդ շրջանը
կը կոչէ հոգեկան ինֆնալերուծումի շր-
ջան, գէթ մինչեւ 1893, անվերջ կեդրո-
նացումներով ինքնիր մէջ, խուսելով մար-
դերէն, լոյսէն, կեանքէն, եւ ջանալով
պեղել իր ներսը բունած ցաւին պատճառ-
ները: Բայց անօդո՛ւտ... վասնզի կը
յանգէր միշտ աղետալիօրէն նոյն ահաւոր
հետեւանքներուն. սարսափ մարդերէն,
սարսափ իր անձէն, իր իսկ գոյութենէն,
տենչանք մահուան եւ անէացումի:

Այդ շրջանին, իր բացարձակ մեկուսա-
ցումներու տարիներուն է որ դրած է իր
Միմալ արձակուանակ բանաստեղծութիւ-
նը, այնպէս ինչպէս եկած է գրչին տակ,
բնական, գեղուն, առանց ձեւական խը-
նամբի: Հոն պատկերները իրենց պարզու-
թեամբը ուժգին կը հնչեն ու կը բանան
մեղի ծալքերը այդ խելագար հոգիին:

Կորուստէ փրկելու համար, ու նաեւ իր
եղական զգայնութեան զաղափար մը տա-
լու համար կը մէջըրեւմ գայն ամբողջա-
պէս.

Տարիներն որոնք ետիս են՝
Իրենց զուարթութեան դառն յիշատակով
Զիս կը չարչարեն.
Տարիներն որոնք առջիս են՝
Խելագարութեան ահաւոր հեռապատկերով
Զիս կը քարացնեն:

Հին տարիներն՝ որոնց լիայոյս պայծառութիւնն
Աստիճանաւ կը նուազի,
Նոր տարիներն՝ որոնց դերարոյս մթութիւնն
Տենդերու սաստկութեան հետ կ'աճի:
Հին տարիներն, հնազոյններն, ի՞նչ քաղցր կը ժպտին.
Նոր տարիներն, նորագոյններն, ի՞նչ ծամածուծութիւններ ունին:

Հին տարիներն իրենց հետ ամէն բան,
Հին բարի տարիներն անգուժ
Տարին ամէն բան իրենց հետ,
Ամէնքն ու ամէն բան անդարձ յաւիտեան.
Մայրս, հայրս, եղբայրս,
Սէրս, յոյսս, հաւատքս:

Նոր տարիներն ոչի՞նչ պիտի բերեն ինձի.
— Նոր տարակոյսներ պիտի բերեն մտքիս,
Նոր յուսախաբութիւններ սրտիս,
Ու նոր մշուշներ հոգիիս,
Արագ արագ կու գան՝ որպէս գութկան.
Ու յամր յամր կ'երթան,
Զի ծանրաբեռնալ միշտ կ'երթան
Նոր տարիներն՝ որոնք հին են այժմ:

Անկողիները մէկիկ մէկիկ ծրարեցան,
Պնակները մէկիկ մէկիկ վերցան,
Ու ձայները մէկիկ մէկիկ մարեցան:
Ու տունս հիմայ մէկ անկողնեակ,
Ու սեղանս հիմայ մէկ պնակ,
Ու բնա՛ւ կենդանի ձայնի մ'արձագանգ:

Ես կերակուրս կ'ուտամ ու կերակուրս զիս կ'ուտէ,
Ես սենեակներս կը պտտիմ, եւ ուրուականք գանկիս սենեակ-
ները կը պտտին.

Եւ պատերուն վրայ պատանքի պէս ճերմակ՝
Կը պտտին գիրկընդխառն իմ սիրելեացս ստուերները,
Կը պտտին գիրկընդխառն հին տարիներուն ստուերները:

Հին բարի տարիներն անգուժ
Երջանկութեան պայծառաչող պատկերներ
Աչքիս տակ միշտ կը պտտցնեն:
Ու տարիներն որ պիտի գան,
Սեւ սեւ սարսուռներ
Հոգիիս մէջ կը պտտցնեն:

1895-ին երկու յատկանշական քերթ-
ուածներ Գլխէն մէջտեղ. Հրայրք մու-
քիմ եւ Խօսք Բնի Աստուծոյ (կամ Նոր
Կեանք):

«Հրայրք մութիւն»ը իբր չարքի մը ընդ-
հանուր տիտղոս՝ Երեւան կու գայ 1899ին
«Մասիս» շաբաթաթերթին մէջ (թ. 8-9,
էջ 249): Գրուած է Ոսկեղջիւր, 12 Մարտ
1895-ին եւ ստորագրուած Հուր Հայրան:

Եղիա 1897-ին Եւրոպա ըրած անօդուտ
ճամբորդութենէն Պոլիս վերադարձին,
հրաւէր կը ստանայ Շամտանձեանէն աշ-
խատակցելու «Մասիս»ին, որուն ի պա-
տասխան կը զրկէ անտիպ բանաստեղծու-
թիւններու հաւաքածոյ մը, որուն առա-
ջինն է Հրայրք մութիւն Երգը, զոր կը
կանխէ ներածութիւն մը հետեւեալ կա-
րեւոր բացատրութիւններով.

«Ամենայն դժբախտ տարիներու մէջ զբաժնաւոր եմ, զոր պիտի հրատարակեմ «Մասիս»-ի մէջ: Իցի՛ւ թէ բանաստեղծին ըրած բարեբան իրենց ընթերցողներուն ալ ընէին: Արդէն քանիներ ընդօրինակած են սոյն անտիպ բանաստեղծութիւններս. ոմանք նոյնիսկ... իրաւունք սեփականեցին իրենց՝ անոնցմէ մէկ քանին վար դնելու: — Զիս ամենայն աւելի ներշնչողը մութն եղած է միշտ. երեկոյեան ստուերներն, անդնդոց ու հողւոյն մութ ալքերը, խաչն, իր ոտքի մութ գանկն, եւ իր գլխուն վրայի մութ ամպը, սեւ մազերն ու սեւ աչքերը, աղաւն ու անդըր, բուն ու փոթորիկը, ինչ որ սեւ կ'երգէ եւ ինչ որ սեւ կը թորէ: Զբարթ կամ անտարբեր տաղերու ընդհանուր մակագիր մը չեմ որոշած դեռ: Տըխուր քերթումներս են, զորս այժմ կը հրատարակեմ Հրայր Բաբիւն անունով: Ո՛հ, հրայրքով՝ այո՛ կը սիրեմ մութն, եւ հոգւոյս ճիւղերով կը գծագրեմ դայն թուղթին վրայ»:

Անշուշտ հետաքրքրական է դիտել թէ որո՞նք էին այն Հրայր Բաբիւն շարքը ամբողջացնող երգերը: «Մասիս» շաբաթաթերթը զանոնք քանի մը տարուան ընթացքին ի լոյս ընծայած ըլլալու էր. եւ սակայն «Մասիս»-ի էջերը ընդունայն տեղ կը թղթատենք փնտռելու համար դանոնք: Արդեօք Եղիա քաջած էր զանոնք խմբագրութենէն, թէ սա անհոգաբար ցրուած էր ասդին անդին, եւ այսպէս ծրարագիրը ցնդած: Այս կէտը իսկապէս կը մնայ մութ: 1901-ին լոյս կը տեսնեն Սիրոյ լեզուներ (անդ. 1901, 260) սիրային երգ մը, Թիքեռնիկ (անդ. 355), Առեղծուածը (անդ. 403), Իմ կեանքս (անդ. 1902, 460), վերջին երկուքը զբոնուած աղգային հիւանդանոցին մէջ 1901-ին: Ահա ինչ որ կը գտնենք 1899-ի մերձաւոր տարիներուն «Մասիս»-ի էջերուն մէջ, անոնք ալ ոչ Հրայր Բաբիւն ընդ-

հանուր տխրոսի տակ: Ո՛ւր են ուրեմն այդ բանաստեղծութիւնները, եւ ինչո՞ւ «Մասիս»-ի խմբագրութիւնը անհոգացած է եւ տեղ մը իսկ համառօտիւ լուսարանութիւն չի տար իրեն ձեռնած այդ ժառանգութեան: Միակ քերթումը, որ այդ խորագրին տակ հրատարակուած է, Խօսք ընդ Աստուծոյն է, որու մասին պիտի անդրադառնանք յետոյ:

Տեսնենք նախ Հրայր Բաբիւն ընդհանուր տխրոսին բացատրական քերթումը: Հրաշակերտ մը չէ, ինչպէս կ'ուզէ ներկայացնել դայն Գեղամ Ֆէնէրճեան (իր Եղիայի նուիրուած ուսումնասիրութեան մէջ իբր աւարտաճառ, դր. 1921, տպ. Պոլիս): Ոչ միայն գեղեցիկ չէ ան, այլ իր միւս երգերուն տպաւորիչ աղբիւր-թիւնն իսկ չի գործեր. ոչ ձեւով կատարեալ է, եւ ոչ ալ պատկերներու բնականութեամբ գրաւիչ. զարմանալի կը թուի մեղի Ֆէնէրճեանի ճաշակին ու դատողութեան այդ չափազանցութիւնը: Տուները թուարկումներ են պարզապէս մութը յիշեցնող պատկերներու: Հոն հոգեվիճակ մը ստեղծուած չէ, խաւարի տառապանքը հոգիացած չէ, եւ չէ դարձած արձագանքը բանաստեղծի ապրումներուն: Պատկերներու անբնականութիւնը եւ փնտրուած զգալաւորի կ'աւելնայ այդ քերթում-ծին ներշնչումը: Համառօտ՝ բացակայ է հոն Եղիայի հզօր երեւակայութիւնը որ իր ուրիշ կտորները կեանքով ու հոգեկան տառապանքի բարախումով կը լեցնէ:

Յուզումի մէկ նոպայի մը մէջ՝ Եղիայի զգացողութիւնը եւ հզօր շնչը կրնար սարսուռով ցնցել մեզ, բայց հոս չկայ այդ բանը: Եթէ հոս կը կատարենք ասոր ամբողջական մէջբերումը, մեր նպատակն է որ ան ծառայէ համեմատութեան եզր մը ըլլալու իր լաւագոյն էջերուն, եւ մանաւանդ իր միւս երգին՝ որ դարձեալ մութի հրայր մըն է:

«Անիւթ բաներուն է՛ն անուշը, մո՛ւթ, Բօղ ու քօղահան, երազոց ծընող, Գոհարին պատեան, հոգւոյս մթնոլորտ, Բու բուն կայքդ ո՞ւր է, քոյին ո՞ ծընող:

Կարօտի քեզ հան իր բոյնին համար Ու իրենց ննջախորշն նորամուլ քեզմով Պարուրեն յամայը՝ քեւ երկնակամար Յայտնէ ծիր կաթինն ու վարսամն հոլով:

Կրիային պէս դաս, խոյս տաս դերդ ծիծառն՝ Երբ բաղմաստեղեան լուցանեմք ըզջահ. Յո՞ գընաս յայնժամ, աղո՛ւ որպէս գառն, Եղիճներուն մէջ, ծա՞կ գանկին փորն, ա՛հ:

Բայց ի՞նչպէս այնքան անոյշ ես դուն, մո՛ւթ, Բոյներուն վուվո՞ւն ըզքեզ յօրինէ. Շողն աղամանդին կու ծըծես պուտ պուտ. Կամ ուղե՞ղն ուտես մարդուն՝ երբ ննջէ՛:

Հաւատարիմ շան հանգէտ ոտքիս տակ Փրոռուած ես՝ յորժամ գըրի՛ն իմ շարժի. Ու երբ սրտիս ի փոր զարթնու յիշատակ, Սեւ թրթռումներովդ՝ ո՛հ, նա գանգըրուի:

Ծալլուած ծունկին, անթոց գողին մէջ, Սիրե՛ս ճնշուիլ: Եւ երբ ծնրադրեմ, Կամ ծալլեմ թեւերս՝ ըլլամ խորունկ էջ, Գո՛ղ թեւադրուի հոգեակն իմ ի քէն:

Յաւերժագոյակ, լոյսէն շատ առաջ Կայիր դուն էից ու է՛ից վըրայ. Բու ծոցէդ ծընան կապոյտն ու կանաչ. Խորքդ յաւիտեան կեանքն եռայ ու դեռայ:

Մո՛ւթ յոգնատըխուր, մո՛ւթ ամենահրաշ, Ուկէտաններուն յատակը դուն չե՞ս, Որ կու լաս ճերմակ մարգարիտն անմաշ, Որ ճերմակ փրփուրն երկնածանիկե՛ս:

Ու մարգարիտը դու կ'առլընուս, մո՛ւթ, Որպէս բովանդակ անդունդն էութեան. Սեւ քար սրտից մէջ դուն կը դընես գութ, Ու ճերմակ թեւոց տակ մերթ գերեզման:

Ո՞չ քու սեւդ է որ կ'ընէ աչքն հըզօր. Ո՞չ քու թեւդ յըղէ աղօթքն երկնաճե՛մ.

Ո՞չ թեւդ որ դրկէ մարդն յարգանդի մօր .
Ո՞չ քու սեւդ է որ կ'ընէ զխաչ վըսեմ :

Աննիւթ բաներուն է'ն անուշը, մո'ւթ,
Մեղրըդ ո՞չ հոնկէ՝ խաչին թեւերէն՝
Հոգւոյն մէջ հոսէ . ու քու բուն անունդ
Չէ՛ մի տառապանք, որ դայ մեղ երկնէն :

Տարիներ վերջ, 1929 տարւոյն Ա. Չօ-
պանեանի «Անահիտ»ին մէջ (թիւ 1, Նոր
Շրջան, Ա. տարի, էջ 21) կ'երեւի Եղիա-
յի Հրայրք մութիմ երկմասնեայ ուրիշ
քերթուած մը, գրուած Հասգիւղ, 6 Ապ-
րիլ 1895-ին : Հոս թուարկումի ոճը չէ
այլեւս, այլ մութին զգացողութիւնը,
վերածուած հոգեկան տանջանքի, որ հե-
ղինակին հարազատ զգայնութիւնը կու
տայ : Հիւանդագին տենջանքներ, արտա-
սովոր տեսիլներ, պատկերներու խիղա-
խութիւն, բացատրութիւններու ուժգնու-
թիւն, այս բոլորը զգացուած, ապրուած
վայրկեաններու արտայայտութիւններ են,
եւ ատոր համար ալ աւելի՛ կենդանի, ա-
ւելի՛ ազդեցիկ քան նախընթացը, հակա-
ռակ տաղաչափական կարգ մը անհար-
թութիւններու : Հակադրելու համար դայն
միւսին՝ ուղեցիկը հոս ամբողջապէս ար-
տատպել, եւ միանգամայն այս առթիւ
ճանչցնելու համար դայն գրասէր հասա-
րակութեան, որուն առջեւ ցարդ Եղիայի
բանաստեղծութեանց ամբողջական հատոր
մը գրուած չէ :

Ա.

Ծածկըւելու տենչ մ'ախտադին
Ձիս ատեցող ըրաւ արիւնոյն .
Բանաւոր պէտք, սէր կաթոգին
Կը զգայ սիրտն իմ առ մո'ւթ, լո'ւռ բոյն :

Արդանդին մէջ մղձեալ տըղան,
Մարդն որ ի խոր իջաւ վիրապ,
Մանաւանդ ա'յն՝ որ գերեզման,
Կը նախանձիմ անոնց, վշտասպ :

Չծնած՝ մօրս ըսի. «Միշտ հո'ն»,

Եւ առ Աստուած յաճախ. «Ալ հո'ն» .
Արգանդն, աւա՛ղ, բացուեցաւ, փո'ս,
Գերեզմանին չը բացուիր փոսն . . . :

Արիւնոյն կոնակս երբ դարձուցի,
Արիւնաշող դէմք մը տեսայ .
Ա'հ, չեմ ուղեր ինձ դըրացի՝
Բայց թէ սեւ խաչդ, երկնից փեսայ :

Լուսնի գիշեր ամէն անգամ
Տափակ գլտայ չքնաղ Մոտան,
Վըսեմացաւ այն դամ ըղգամ,
Ազուաք ծովային երբոր եկան :

Բ.

Անձա՛ւ մ'ըլլար բընակարանս,
Ինձ բնտանիք՝ ցաւոտ չըղջկունք,
Յաղթ բոյն մ'անգեղց՝ առաջի դրանս,
Միշտ սե'ւ հողին մած՝ իմ ծընդունք :

Ծովեղերին՝ գերեզմանին
Մէջտեղ անձաւ մը խո'ր ու մութ,
Ու տընութիւնս որորէին
Աղեկիղիկ գեղօնք անդութ :

Սեւ իր վէպերն ինձ պատմէ՛ր ծով,
Սեւ իր երգերն ոսկրն ինձ յըզէ՛ր
Սեւ մըրըրկին լեշկ թեւերով .
Ո՛ր, ճաչակման մահու մեղեր :

Այտերուս տակ դանկդ, ո՛վ Մաքրիկ,
Աչքերուս տակ խաչդ, ո՛վ Յիսուս :
Ո՛վ Մաքրուհի, լուռ քանարիկ .
Խաչեա՛ղ, որ միշտ խնդրես արտսո'ւս :

Ուտեստս ազուա՛ք դուռնէն տային .
Ու քիտոն որմոց՝ ինձ իրբեւ ջուր .
Չըղջկանց թեւերն ալ իմ մարմին
Թող ծածկէին : Իսկ գըլուխս ո՛ւր . . . :

Այլ գլխուդ դուն ունեցա՞ր տեղ,
Փրկիչ մարդկան, Տէր իմ Յիսուս .
Եւ, վերջապէս մահիճդ՝ այդ նեղ
Փայտը չեղա՞ւ, փայտն՝ որ յի՛մ ուս . . . :

Եւ այդ շրջեալ Դըրախտին մէջ
Անցնէ՛ր, ո՛հ, կեանքն իմ բովանդակ .
Մինչեւ լեցուէր այդ սընամէջ
Գանկն աղջկան, - վեհ նահատակ :

Մինչեւ որ դանկդ, առեղծուած - կո'յս,
Լեցուէր ի հո'ւր հուր արտասուօք,
Ու լեցընէր անձաւս անլոյս
Ու չարչարանքս ոչ տեսնէր ոք :

Քընարիս թեւք՝ թուիս գիսակիդ
Թելերն : Հըմայքն՝ ոյժն իմ մատանց
Գա՛յր վէրքերէն խոցեալ կողիդ,
Տէ՛ր, արիւնէդ՝ հուպ իմ շրթանց :

Եւ Խաչիդ սեւն սիւն յար թանձրանա՛ր,
Այնքան որ ա'լ պայծառ թըւէր
Մութն որ պատէր շիրիմն իմ այր,
Եւ Խաչիդ ոտքն իմ ողբերգներ

Այնքան սուր շեշտ մը ստանային
Որ . . . քարանձաւն հերձեալ բացուէր ,

Ո՛վ իմ Աստուածս, Արարչութիւնդ ալ հինցա՛ւ :
Ես երկինք մը՝ կը փոփոխես զիս յաւէտ,
Երկրիս տօնին մէջ տանիս զիս ցաւէ ցաւ .
Եւ օր մ'երկնից տակ չը պիտ' լլամ փոքր իսկ կէտ .
Արարչութիւնդ է՛ր չես փոխեր . ո՛հ հինցա՛ւ . . . :

Յամաքը գրաւեն միեւնոյն տեղն յարաժամ .
Նո'յն շողն յաստեղց ամէն գիշեր հասնի մեզ,
Աքաղաղն յար ծանուցանէ զարթման ժամ .
Եւ . . . խաչիս նո'յն երկաթ բեւեռն յար դամբս .
Նորաստեղծման՝ ո՛հ, դեռ չեկա՞ւ, Տէր իմ, ժամ :

(1) Փարիզի Նուպարեան Մատենադարանին մէջ
Արամ Անտոնեան գտած է սկզբնական օրինակը
այս բանաստեղծութեան ՆՈՐ ԿԵԱՆՔ խորագրով :
Հաւանաբար ինքը Եղիան փորձերու սրբազրու-
թեան ատեն վերածած է տիտղոսը ԽՕՄԸ ընդ Աս-
տուծոյ-ի, մինչ սկզբնաղի օրինակին մէջ մնա-
ցած է նախկին վերնագիրը եւ այդպէս ալ պահ-
ուած Նուպարեան մատենադարանին մէջ : Ենթա-
դրելով որ այդ փոփոխութիւնը Հեղինակին հա-
ւանութեամբ կատարուած է, կը պահենք նոյնը
մենք ալ : «Մասիս»ի հրատարակութեան մէջ տը-
պադրական սխալներ վրիպած են, զոր ինքը սըր-
բազրած է, էջ 347 :

Եւ, երեւո՛յթ նոր՝ երկնային,
— Մոնազն ոչ մարդ, այլ . . . Աստուած
մ'էր :

Տըւայտանաց հըրաչքն է այդ :
Հըրապուրեց գԱստուած ու Մարդ
Ձոր էն զիջոյց լինել . տըւա՛յտ
Կացուցանէ Աստուած ըզմարդ :

(6 ապր. 1895, Հասգիւղ)

Երկրորդ քերթուածը, որ Հրայրք մութիմ
չարքին կը պատկանի եւ ծանօթ հրա-
տարակութեամբ «Մասիս»ի մէջ (1899,
313) է ԽՕՄԸ ընդ Աստուծոյ(1), ստորա-
դրուած նմանապէս Հուր Հայրան եւ ձօն-
ուած Իղմիրեան Մատթէոս պատրիար-
քին : Տարօրինակ է մտածութիւնը Եղիա-
յին՝ այդպիսի քերթուած մը կրօնական
պետի մը նուիրելու : Գրուած է Հասգիւղ,
17 Ապրիլ 1895, զղջական շեշտով մը, իր
յանդուղն բոլորներուն դէմ կարծես ու-
ղելով յօրինել աղօթք մը, որ սակայն իր
խորքին մէջ կը յայտնէ միշտ գանգատ
մը արարչութեան կարգերուն դէմ : Ահա-
ւասիկ ամբողջապէս այդ յատկանշական
քերթուածն ալ .

Նոյն ծաւալով թաւալ առնու միշտ արեւ,
Հիւժարտաւոր դեռ չըմեռա՛ւ լուսինն ալ.
Լոյս առժըծէ, շուք տարածէ միշտ տեւեւ.
Այդ շուքն հոգւոյս մէջ հոսէ. հո՛ն՝ հին շուքն ալ.
Նո՛ր ԵՂԻՑԻ մ'Աստուած, նոր լոյս, նոր արեւ:

Յերկնից յերկիր ելեւէջէ նոյն կաթիլ.
Մթնոլորտն է ճառագայթին միշտ ճամբան.
Այդ երկուքէն կազմաւթթի միշտ Ապրիլ.
Այդ երկուքին ալ անդգայ է տապան,
Նոր աշխարհի մը մէջ տո՛ւր ինձ, Տէ՛ր, ապրիլ:

Մայիսն երկնից բերէր վարդեր բոցավառ,
Մեղրը նուազէր՝ վարդէն փեթակ ժիր մեղուն.
Բուրէր թիթեռն, օդայածիկ ո՛հ, բուրվառ,
Բուրմամբ հրզոր՝ որ տայր աչացս մահուան քուն:
Վերածնէ՛ր՝... թռչուն: Տէ՛ր, խաչդ ինձի թառ:

Հըրաշալի՛ք՝ տիեզերքն ողջոյն, արդարեւ:
Բայց մենք հըրաշք, նորոգ կեանք մենք կ'ուզենք, Տէ՛ր.
Հեթանոսներն ալ պաշտեցին այդ արեւ.
Սուրբ արեգակ մը մեր գլխուն վրայ ծագէ՛ր.
Թող ծակծրկէ մարմինս, այլ քոյդ ըլլա՛յ՝ րեւ:

Ըզգայարանք մեր բըթացա՛ն այս դեղոյն.
Մաշցաւ ինքն ալ ափնամաշն ովկէան,
Բընա՛ւ հոգւոյս չը բարբառիր արուեստն յոյն.
Ծով եւ արուեստ ազադակեն նորոգ կեանք.
Ո՛ւր խաչիդ տակ փրթթած արուեստն այն անհո՛ւն:

Տէ՛ր... ա՛հ, Տէ՛ր իմ, մարմին՝ ըզգեստ ա՛ռ նորէն.
Նոր աշխարհ մը ստեղծել եկուր աչքիս տակ...
Խըմորն հատաւ Արարչութեան. սէ՛ր վերէն,
Սէ՛ր բեր: Իջնենք քեզ հետ անդունդն անյատակ.
Հոն է կուտուած խաչիդ սուրբ մութն որ զօրէ՛ն:

Մեր քաղաքաց կեղծ լոյսք, ըչարք, ջահք պարուց
Մոռցուցին մեզ գեղն ու շողն սուրբ բընութեան,
Զոր խաչիդ սեն հրաշապայծառ ցայտեցուց:
Յօտար յարկաց մեր խուսափուկ, ապաստան
Հոն կենսատու Սեն որոնեց — մէջ ալո՛ւց:

Այո՛, վըհէն պիտի հանես աշխարհ նոր...
Հայհոյեցի, Աստուած, ներէ՛, ներդաշնակ
Եւ մշտանոր է տիեզերքդ ալեւոր.
Հըրաշաճայն նա բերամատն է դաշնակ.
Զմեղ անխող ըրաւ դարուն մեր ժխոր:

Զմեղ անտարբեր կամ անդգայ բուն գեղոյն
Ըրաւ արուեստ մը նիւթապաշտ եւ ըստրուկ:
Ե՛կ, անդեղոց խորն անսահման կայ դաղտ բոյն.
Հոն քրիստոնեայ բոլոր վըսեմ ներշնչմունք,
Խաչիդ թեւոց ներքեւ ծնած բիւր թռչուն...:

Մի՛ ծնունդ ըլլար այս հեղ, Տէ՛ր իմ, տուր ծընունդ.
Խանձարուրիդ համար չըկայ սուրբ մըսուր.
Մոգաց չըրթունք չեն յեղյեղեր ա՛լ անունդ.
Մըկըրտութեանդ համար կաթիլ մ'անդամ ջուր,
Սուրբ ջուր, առուակ սուրբ, վա՛հ, չըկայ...: Սեւ ան-
դունդ,

Անդունդն առաւ պահեց ինչ որ մեզ տըւիր.
Արցունքդ, արիւնդ, հին քուրճդ ու նոր պատուիրանդ:
Արծաթ խաչեր շա՛տ...: Այլ սեւ խաչդ, արհաւիր,
Ահն Աստուծոյ, սէր նըմանեաց, սուրբ եռանդ,
Անդունդոց խորն են, Տէ՛ր, ինչ որ մեզ տուիր...:

Ե՛կ, իջնենք հոն: Հանենք ի լոյս արեգին
Ինչ որ կորոյս անմըտութիւնն... իմաստնոց:
Թոյլ պիտի տաս որ ի խոր անդըր վըհին
Քու ետեւէդ իջնեմ, բարձանց Տէ՛ր՝ խորոց, —
Զի ետեւէդ զիս Գողգոթա հանեցին...:

Մարդ չը ծընիր քրիստոնեայ, Տէ՛ր [իմ], կ'ըլլայ:
Խաչիդ ճամբան, խիճն ընդ տուրք, ճակտին փուշ,
Ատոնք ըզմարդ, ատոնք միայն քրիստոնեայ
Կ'ընեն: Գալու գհետ Քո ի լոյս կամ մըշուշ
Պատրաստ եմ եւ... արժանի — ո՛ւր ալ ըլլայ:

Վայրկեանի մը տրամադրութեան ժայթ-
քումն ըլլալու երեւոյթ ունի այս բանա-
ստեղծութիւնը, նոյնիսկ տեղ տեղ թերի
ձեւական կատարելութեան կողմէ: Առա-
ջին քանի մը տունները մտածութեան եւ
պատկերաւոր արտայայտութեամբ գեղե-
ցիկ են, իսկ վերջինները կը թունան ու
կը դառնան սովորական ու վարդապետա-
կան: Բանաստեղծը բնութեան նոյն
աշխարհէն, գտնուելով բնութեան նոյն
կարգուսարքին առջեւ, տեսնելով միշտ
նոյն ընթացքը օրուան, գիշերուան, արե-
ւուն, լուսնին: Հոգեկան ձանձրոյթի մը
արտայայտութիւն է, լի գանգատով
մարդկութեան դէմ, իմաստուններու եւ
փրկիչութեան բերած նորութիւններու
դէմ, որոնցմով մարդիկ թողած լոյսին ու
զաղափարին պաշտամունքը՝ դարձած են
նիւթապաշտ: Կը գղայ Եղիա որ նոր աշ-
խարհի մը իր պահանջին մէջ կը չափա-
զանցէ, կը գղայ որ կը հայհոյէ նոյնիսկ
աստուածային անքննելի իմաստութեան
դէմ. ու կը շրջէ իր բողոքը սրբադրելով
ինքզինքը. «Ներդաշնակ եւ մշտանոր է
տիեզերքդ ալեւոր»: Իր ընդհանուր կար-
ծեցեալ տեղեւորութեան պատճառը կը հա-
մարի դարուն նիւթապաշտ փրկիչութեան
թիւնը, որ ջնջելով հոգեկան արժէքներու

Վսեմ գեղեցկութիւնը, անտարբեր եւ անզգայ դարձուցած է տեսնելու տիեզերքի արարչին ստեղծագործութեան մէջ այն զմայլելի կարգը եւ իմաստութիւնը, որով ամէն ինչ գեղեցիկ է եւ ամէն ինչ խորապէս աստուածային: Եղիայի կոչը նոր աշխարհի մը ստեղծագործումին, կը դառնայ բարոյական աշխարհի շուրջ, զոր կը փափաքի տեսնել նորոգուած Քրիստոսի մարդասիրական սկզբունքներու տիրապետութեամբը: Տառապող հոգիի մը երգն է միշտ, թէեւ կրօնական եւ բարեպաշտիկ ձեւերու բռնազբօսիկ գործածութեամբ:

Այս շրջանիս Եղիա, մօրը մահուամբ կրած ահաւոր ցնցումով, անբացատրելի դիւրագգածութիւններով խռոված՝ կ'ապրի յուսահատական օրեր: Իմ կեանքս (Մասիս. 1902, 460) հիւանդանոցին մէջ գրուած 8 Մայիս 1901-ին, կը հասնի տրամոլեան ուժգին թափահարումներուն: Ամփոփ պատմութիւնն է իր ծնունդէն, իր կեանքին, իր աղետալ տառա-

պանքին: Ձեւական անհոգութիւններ հոս ալ կան անշուշտ, բայց եղերեղական տխրանոյշ գեղեցկութիւն մը ունի այդ բանաստեղծութիւնը եւ մանաւանդ բնական թափ մը: Եղիա մօրը արդանդին մէջ մեղաւորութեամբ ինքնին, աւելի ուշ՝ երբ ճակատը կը հակի գրքերուն վերայ, կ'ըլլայ մտատանջութիւն, ուսումնասիրելով բախտը, վախճանը մարդուն: Ազուա մըն է ինքը, որ կ'իջնէ մոռնալ անդունդը գիտութեան եւ միայն մօրը արցունքները զինքը ատկէ քիչ մը կը հեռացնեն, լոյս կու տան հոգւոյն անդունդին, բայց անհոգութեամբ իր տենդոտ էջերը կը տանի զինքը կորուստի, հեռու մայրենի աչքերէն, հեռու այն սրտէն որ կը բաբախէր իրեն համար: Հակադրութիւններով եւ պատկերներով լի այս բանաստեղծութիւնը եթէ օժտուած ըլլար ձեւական կատարելութեամբ մ'ալ, պիտի նկատուէր անշուշտ իր լաւագոյն էջերէն մին:

Գալըս չեմ յիշեր. լալըս չեմ մոռնար,
— Լացը զոր պիտի յաւիտեան ես լամ —
Երբ մայրըս թողուց զիս մինակ, գընա՛ց
Մօրը քովիկը հանգչիլ Իւսկիւտար:

Գլուխը բարձրն վրայ զիս աշխարհք բերաւ,
Սիրտը քարի՛ն տակ կաթ տըլաւ ինծի,
Ոտքը փուշին վրայ քալեց ինծի հետ,
Եւ իրմէ ճերմակ մագերով թողուց զիս...:

Սաղմոսը գերքն էր. ու սաղմը գերկը,
Սաղմը մաղձ եղած, մեղամաղձութիւն,
Սաղմը մըտածում, մըտատանջութիւն
Մարդոց նըսեհին՝ վախճանին համար:

Մէկ էթէ կարգար, երկո՛ւք կը նայէր.
Նետ մը Պօղոսին ու նե՛տ մ'Եղիային.
Զո՛րդ նետուած աչքի՛ ուր պարպուէր իր սիրտ,
Սիրտն ըզգայուն որ հիւժաւ այնքան շուտ...:

Պօղոսը վարդ մ'էր, ես աղոա՛ւ անթեւ,
Որուն թեւ բուսաւ եւ մեծցաւ այնքա՛ն

Մինչ զի անդընդոց վերե՛լքն իջայ վար,
Ու զիս կորսնցուց հէզ մայրս իր աչքէն...:

Վարդագեղ բոյնին՝ անպարագրելի՛
Շրջանակ մ'եղայ սե՛ւ՝ խաւարակուռ,
Զոր կ'աստղացունէր հոծ արտասուք մօրս.
Անդունդիս լոյսե՛րն եղան այդ արտասուք...:

Վայրէջքս ի խոր վիհն այնքա՛ն տենդոտ էր,
Զի լոյսն ետեւէս հաղիւ կը հասնէր.
Այլ միշտ կը հասնէր, զի մօրմէ՛ս կու գար,
Զի սրտիս սընունդն ա՛յն պիտի ըլլար:

Ա՛յն արտասուքն, այո՛, ուրի՛շ արցունքներ
Գեթսեմանիէն, Գանգէսին ծոցէն.
Սովատանջ ձագուցն համար՝ ո՛հ՝ լեարդը
Պատուած լուսնաւուն այրա՛ծ աչքերէն:

Այսպէ՛ս սընայ ես, այսպէ՛ս ապրեցայ,
Այսպէ՛ս իջայ ես, այսպէ՛ս բարձրացայ,
Խորամըխուէլով ալքերն էութեան՝
Արտասուց տակ ոյք հացս, իմ բախտս եղան:

Նոյն տարին, Յունիս 16-ին, ազգային եւ իր ճակատագրին դէմ. որմէ սա քանի
հիւանդանոցին մէջ գրուած իր Առեղծուած մը տողերը ցոյց կու տան թէ ի՛նչքան ահ-
ծը (Մասիս. 1901, 403) վերստին բողոք ունի է իր խոհը, իր զգացումը.
մըն է, եւ այս անգամ իր բարեկամներուն

Զըգիտցայ դեռ ես՝ կեա՞նք մըն եմ կամ պատրա՛նք.
Աչքս անդունդին թ'արփու՞յն համար է բացուած.
Կը սիրէ՞ զիս թէ ոչ կ'ատէ, ո՛հ, Աստուած.
Մերթ պատմութեան կըրեմ ու մերթ, Տէ՛ր, պատա՛նք:

Տեսնելով զիս խաչակրներէ՛ն անցորդներ,
Մինչ զոյգ թեւերն հեռուստ բանա՛յ ինձ մանուկ.
Մա՞րթ է գի դեւ ու թէ հրեշտակ ըլլամ զոյգ.
Կիւսի դէմքով մայրըս արդեօք հրէ՞ջ մըն էր:

Տրամոլեանն ու ցաւը Եղիայի սրտին րունակեն. փոքրիկ բանաստեղծութիւն
մէջ կ'արիւնին խկական վերքերով: Տե- մը՝ ուր զգացումը այնքան ալ թաւմ է
սէ՛ք սա տողերը ինչքան կսկիծ կը պա- եւ ուժգնօրէն արտայայտուած.

Զով ու մաքուր ջուր բերէք,
Վէրքէս արիւն կը յորդէ.
Զը պիտի՝ երկար փնտըռէք,
Մարմին՝ հոգի, համակ վէրք:

Արցունքս աղի՛ կը կաթի
Բերանաբաց փիւրացս մէջ.
Վէրքըս սո՛ւր, սո՛ւր կըսկըծի.
Վէրքըս, մա՛յր իմ կըսկըծի:

Փուշ ու նիդակ չ'երեւիր,
Ո՞վ յար յիս վէրք կը բանայ.
Արցունքն աչքէս չի դադրիր.
Դուն ինձ, մա՛յր իմ, ի՞նչ ըրիր:

Ուրիշ ողբերգ մը որ իր միայնութեան
չարհարանքին, ստուերներու հետ ապրած
անմխիթար կեանքին պատկերը կը դծէ,
Բարձր տիտղոսութեամբ եռատող փոքրիկ բա-
նաստեղծութիւնն է (Թէոֆիլ. Ամէնուն
Տարեցոյցը, 1915, 146), գրուած 1907ին,
լքուած ու մենաւոր, մօրմէն ու սիրելի-
ներէն զրկուած մարդու ճիշդ: Այդ ողբ-
երգը, արեւելահայ ու միջնադարեան կամ
աշուղային շէշտով մը գրուած, արեւմե-
տահայ գրականութեան մէջ նորութիւն
մըն է ձեւական արտայայտութեամբը.

Անկողնոյ տեղ լո՛վ բարձ մը,
Բարձին վըրայ լո՛վ փոս մը
Գտնել ո՛հ դառն է, Տէ՛ր իմ:

Ոտիցը տեղ լո՛վ հետք մը,
Գըլո՞ւխ... մազի լո՛վ թել մը
Գտնել ո՛հ դառն է, Տէ՛ր իմ:

Եւ երբ ծովուն կաթիլն յետին ցամաքի
Հուսկ հոսանուտ իր հեւքին մէջ պրկելով
Լուսաբերին նըշուլադեղ կաթ գորով,
Պիտի յառնէ շիրմէն, համակ եւ աչքի

Պիտի փոխուի Վըմախս հանգէպ երկրնքի,
Եւ զոհերուն բոլոր ինքեան ձըգելով
Կուտեալ արցունքը դարերով, դարերով
Անդընդոց մէջ հոսանք վըրայ հոսանքի

Պիտի հեղու կաղմելով նոր ուկէան
Մըկըրտութեան աւազան նոր մարդկութեան.
Յարեաւ Պայրըն, երգարարիչն անհունին.

Եւ ոյք ապա յարեան յերկրի կամ ծընան
Եւ յաւազան մըխըրճեցան դառնութեան
Պիտ' ըլլան տէրն, եւ ոչ ըստրուկն ա՛լ կեանքին:

(Շարունակելի)

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

Լանջքի տեղ՝ լայն պաստառ մը,
Ծըծի տեղ ծալք մ'ու ծալք մը
Գտնել ո՛հ դառն է, Տէ՛ր իմ:

Պրկո՞ւնք... ո՛հ պատրուածք մը,
Բարձի մսահամ բացք մը
Գտնել ո՛հ դառն է, Տէ՛ր իմ:

Թաշկինակ մը ու բարձ մը,
Հըրաթեշտ ու արցունք մը
Գտնել ո՛հ դառն է, Տէ՛ր իմ:

Եւ այդ բարձին վրայ քուն մը,
Յաւիտենին Հունկ քունը
Քընել ա՛խ դառն է, Տէ՛ր իմ:

Գիրք ծննդոց դառնութեան (Բաղին.
1911. Թ. 2) խորագրով հնչեակի մը մէջ
Եղիա իր եւ բոլոր տառապեալ հոգիներու
արցունքը հաւաքել կը տենչայ, բոլոր
դառնութիւնները հալեցնել բողոքի աւա-
զանի մը մէջ՝ նոր մարդկութեան մը ծը-
նունդ տալու համար, ուր այլեւս մարդը
պիտի չըլլայ ստրուկ կեանքին, եւ բոլոր
դառնացածները պիտի ըլլան տէրերը այդ
աշխարհին: Այս հնչեակը իբր յատկանը-
շական էջ մը Եղիայի, ամփոփուած է
հոս.

ՄԱՐԳԱՅԻՆ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՅԸ

Ա.

Նայեցաւ, դիտեց անգամ մըն ալ իր
գործը, եւ գոհունակութիւն զգաց: Իր
դնահատումը բաւական նկատեց: Ունէր
վստահութիւն՝ իր հանձարին վրայ, ու
երջանիկ զգաց ինքզինք: Մարդկութեան,
ապագայ սերունդներուն կու տար արձան
մը, որ որպէս օրինակ պիտի ծառայէր
անկասկած: Այս արձանին յատկացուցած
էր իր ամբողջական հանձարը, իր լաւա-
քոյն շունչը: Չայն միայն կերտեց իր
կեանքին մէջ, իր ամբողջ կեանքին տե-
ւողութեանը, բայց այս գործը արդէն բա-
ւական նկատեց:

Դեռ կը դիտէր արձանը, ու յանկարծ
Ժպտեցաւ:

Եւ այն ատեն վերլիչեց իր անցեալ օ-
րերը, իր պայքարը, իր անվճատ հետա-
պնդումը իտէալին ետեւէն, աւելի զմայ-
լանքով նայեցաւ գործին որ իր առջեւը
կանգնած էր որպէս հպարտութիւն մը,
երեւակայեց այն սերունդը որ զայն պիտի
յիշէր, երանի տուաւ անոր, եւ գոհ էր,
եւ երջանկութիւն զգաց: Յետոյ՝ գոչեց
գոչեց ինքնիրեն.

— Պարտականութիւնս կատարեցի:
Հաւատաց իր հանձարին: Հաւատաց իր
գործին:

Եւ յետոյ գուրս ելաւ իր աշխատանո-
ցէն, անոր գուրս նախանձով գոցելէ ետ-
քը: Եւ իր կոչումը կատարած մարդու մը
համոզումովը:

Բ.

Ուրախ էր այս արձանագործը:
Ուրախ էր անիկա՝ մանուկի մը պէս
պարզ, մեծերու պէս համոզուած: Նոյն
օրը զնաց կանչելու գինիի սեղանի մը իր

բարեկամները: Պատերազմի սկիզբէն աս-
դին իրարմէ բաժնուած էին զանազան
պատճառներով, զանազան ուղղութեամբ:
Արձանագործը չէր լքած սակայն իր աշ-
խատանոցը, հոն շարունակելով իր սիրած
գործը: Բայց հասան բոլորն ալ. պատե-
րազմը վերջացած էր տարիէ մը ի վեր:
Արձանագործը գիրենք անխտիր ընդու-
նեցաւ իր աշխատանոցին մէջ, ձեռքի լայն
սեղմումներով: Իր գոհունակութիւնը, իր
յաջողութիւնը չզարտկող արտայայտու-
թիւններով: Եւ ըսաւ անոնց.

— Սերունդին՝ որ երիտասարդ է, որ
մեզի պիտի յաջորդէ, մարդոց՝ որ կ'ապ-
րին, զգացի պարտականութեան պէս,
զգացի կոչումի պէս, թողուլ գործ մը...:
Եւ աւելցուց իր բառերը շէշտելով.

— Արձան մը՝ որ կատարելութիւնը
ներկայացնէր:

Իրեն նայեցան իր բարեկամները. յե-
տոյ իրարու ալ նայեցան իր այս բարե-
կամները:

Այն ատեն արձանագործը գոչեց.

— Ահա՛ այդ արձանը:

Եւ կանգ առաւ հպարտութեամբ: Դի-
տեց զայն, դիտեց բոլոր ներկաները, եւ
վերսկսաւ.

— Այս արձանը մեր մայրաքաղաքին
կեդրոնը, Ազգային հրապարակը պիտի
դրուի վաղը, լայն ու բարձր պատուան-
դանի մը վրայ: Հո՛ն պիտի տեսնէք զայն
այլեւս, ինչպէս բոլոր քաղաքացիները:
Ամէն օր մարդոց մէջը պիտի ըլլայ անի-
կա. պիտի տիրէ:

Հոս շունչ առաւ արձանագործը. խօ-
սած էր լրջօրէն, հաւատքով, կատարեալ
հաւատքով: Յետոյ Ժպտեցաւ ու ըսաւ
դեռ.

— Հին Աթէնքն անգամ պիտի նախան-